



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ Ս. ԾՆՆՂԵԱՆ ԱՄԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ՆԻԹԱԿԱՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ**

**- ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՈՒ ՉԱՆԱՉԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐՈՒՆ  
 ԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՌԵԼԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ**

*«Ս. Ծննդեան պատգամը, որելէ ժամանակէ աւելի, այսօ՛ր ուժեղ կը հնչէ մարդկութեան համար, երբ նիւթական ու նիւթականացած աշխարհի բոլոր այլատերող ալիքները, մարդկութիւնը տագնապներու մատնող պատերազմներն ու խռովութիւնները կը յուզեն մեզ եւ քրիստոնէական հաւատքով առաջնորդող մարդկութիւնը: Փոխադարձ սիրոյ, հանդուրժողութեան եւ խաղաղութեան գինուորները դառնալու եւ իրարու օգնելու պատգամները, Յիսուս Մանուկի ծնունդէն 2007 տարիներ ետք, այսօ՛ր ալ մեզի կը հասնին հրեշտակներուն քաղցրահնչիւն երգերով ու մարդկութեան փոխանցուող անժամանցելի աւետիսով, ու մեզ բոլորս կը հրաւիրեն հետեւորդները ըլլալու Բեթղեհեմի վերեւ փայլած աստղին: Դարեր առաջ, փայլուն աստղը եղաւ բարի հովիւներուն եւ իմաստուն մոգերուն առաջնորդը, անոնց քայլերը ուղղեց դէպի Բեթղեհեմի համեստ մտուրը. Աստուածորդին չէր ծնած պերճաշուք պալատներու մէջ, այլ անոր ծննդավայրը եղաւ համեստ մտուր մը, այդպէսով մարդկութեան տալով համեստութեան ու խոնարհութեան առաջին պատգամը»:*

Այս բառերով Է որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան ողջունեց աւելի քան 600 պաշտօնական անձնաւորութիւններն ու ազգայիները, որոնք ընդառաջած էին Սրբազան Հօր Ս. Ծննդեան ընթրիքի հրաւերին ու յիշատակելի երեկոյ մը բոլորեցին Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ: Նոյն օրը առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատուցած էր Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, կատարած էր ջրօրհնէքի արարողութիւն եւ ներկայ հաւատացեալներուն ուղղած՝ Ս. Ծննդեան խորհուրդը արտայայտող իր պատգամը:

Առաջնորդ Սրբազան Հօր Ս. Ծննդեան աւանդական ընթրիքը, նախածեռնութեամբ Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին, տեղի ունեցաւ Շաբաթ, 6 Յունուարի երեկոյեան, հիւրընկալութեամբ Ազգային Առաջնորդարանի բարերարներէն Տիկին Թինա Գարուլանի եւ ընտանիքին: Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերին ընդառաջած էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան եւ հիւպատոսարանի անձնակազմի անդամներ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ

Տոքթ. Վիգեն Յովսեփեան, Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Ազգային Երեսփոխանական Ժողովի, հոգաբարձական ակզմերու ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամներ, ծխական շրջաններու ներկայացուցիչներ, Յ.Մ.Ը.Մ.ի ՀՕՄի, Համազգայինի ու Հայ Դատի Յանձնախումբի ու մամուլի ներկայացուցիչներ, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, հովանաւորներ եւ բազմահարիր ազգայիններ:

## **ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ**

Տօնախմբութեան հանդիսավարն էր Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որ յայտագիրին բացումը կատարեց ողջունելով ներկաները եւ յայտարարելով, որ տօնական երեկոն պիտի սկսի, ըստ աւանդութեան, Առաջնորդ Սրբազան Հօր ու հոգեւորականաց դասուն թափօրով սրահ մուտքով:

Ներկաները, մոմեր ի ձեռին, յոտնկայս դիմաւորեցին հոգեւորականները, որոնք սրահ մտան «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» եւ «Չանճառելի լուսոյ մայր» շարականներուն երգեցողութեամբ: Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան կարդաց Ս. Ծննդեան դրուագը ներկայացնող Դուկասու Աւետարանի հատուածը: Յաջորդեց Թաթախի խորհրդանշական արարողութիւնը:

Երեկոյթին կազմակերպիչ Տիկնանց Օժանդակ Մարմինին անունով ողջոյնի խօսք արտասանեց Մարմինին ատենապետուհին՝ Տիկին Մարիամ Կարապետեան:

Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, իր կարգին ողջունելով ներկաները, Ազգ. Վարչութեան ու անոր հովանիին տակ գործող միաւորներուն անունով շնորհաւորեց բոլորը եւ մաղթեց, որ 2007 տարին ըլլայ ուխտի վերանորոգման ու աշխոյժ աշխատանքի շրջան մը: Ան գոհունակութիւն արտայայտեց որ Ազգ. Առաջնորդարանի Նոր շէնքին բարեփոխման գործը իր լրումին հասած է, եւ կոչ ուղղեց բոլորին, որ գործակցութեան ոգիով շարունակեն աշակից ըլլալ Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան կենսագործման: Տիար Ատենապետը յատկապէս ողջունեց Առաջնորդ Սրբազանին տարած արդիւնաւոր գործը եւ մաղթեց, որ Նոր տարին իրականացում բերէ նուիրումով հիւսուած մեր երազներուն:

## **ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏԳԱՍԸ**

Սպիտակ պաստառի վրայ ցուցադրուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեան խօսքն ու պատգամը, արձանագրուած՝ յատկապէս այս երեկոյին համար:

Վեհափառ Հայրապետը, ողջունելէ ետք Առաջնորդ Սրբազանին ու Ազգային Իշխանութեանց շուրջ համախմբուած ներկաները, գոհունակութիւն արտայայտեց Ազգային Առաջնորդարանի շէնքի ծրագիրին ամբողջացման համար, դրուատեց Առաջնորդ Սրբազանին, Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող միաւորներուն ու մեր կրթական հաստատութեանց տարած գործը, որ կ'իրագործուի հաւաքական արժէքներու պահպանման ու հայկական մեր նպատակներու իրականացման կամքով: Ան զօրակցութիւն արտայայտեց այս աշխատանքը տանող անհատներուն ու կառոյցներուն, որոնց մտասուեռումն է ծառայել մեր հայրենիքին

ու ժողովուրդին ընդհանրական շահերուն: Վեհափառ Հայրապետը յորդորեց նայիլ ներկային ու ապագային, որովհետեւ անցեալի արժեքները արդէն կը պատկանին պատմութեան, մինչդէռ մեր մտասուեռումին առանցքը պետք է ըլլան այսօրն ու ապագան. Նոր Տարին ու Ս. Ծնունդը առիթներ են խորհրդածելու եւ յիշելու, որ Զրիստոսի աշխարհի առաքելութեամբ հինը քանդուեցաւ ու նոր մարդն ու նոր աշխարհը կերտուեցան: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ հինը բոլորովին պետք չէ արհամարհել, այլ օգտուիլ շահուած փորձառութիւններէն եւ այդպէսով բացուիլ նորին, այս մօտեցումով արժեւորել ու ծրագրել նոր կեանքը: «Պետք է ունենանք նորը ընդունելու եւ նորութիւնը քաջալերելու քաջութիւնը, այլապէս կեանքը ճահճացումի կը մատնուի», շեշտեց ան, ընդգծելով, որ այս մօտեցումը պետք է մարմնաւորել մեր անհատական կեանքներուն թէ հաւաքական ընտանիքներուն մէջ:

### **ԳԼԽԱՒՈՐ ՀԻՊՊԱՏՈՍԻՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ**

Հանդիսավար Հայր Սուրբը այնուհետեւ հրաւիրեց Հայաստանի հանրապետութեան գլխաւոր հիւպատոսը՝ արտասանելու իր ողջոյնի խօսքը:

Տիար Արմէն Լիլոյեան, որ առաջին անգամ ըլլալով ներկայ կ'ըլլար Ս. Ծննդեան ընթրիքի այս երեկոյթին, գոհունակութիւն արտայայտեց այն իրողութեան համար, որ այս երեկոն բոլորս կը միատեղէ Ս. Ծննդեան տօնին խորհուրդով, կը թելադրէ լիցքաւորուիլ բարութեամբ, սիրով եւ մարդկային այլ վեհ արժեքներով: Հայրենի դիւանագետը նկատեց, որ տարեմուտն ու տօնական այս օրերը առիթ են վերանայելու անցեալի իրագործումները ու բարի գործերով մշակել նոր ուղին, նոյն արժեքներով միանալ իրարու: Ան մաղթեց, որ Ս. Ծննդեան պատգամը ամէն օր ըլլայ բոլորս առաջնորդող արժեք, մանաւանդ, որ հայ ժողովուրդը լծուած է պետութիւն կերտելու ազնիւ առաքելութեան ու անելի գեղեցիկ կեանքի մը կենսագործման: Գլխաւոր հիւպատոսը վեր առաւ Հայրենիք-Սփիւռք միասնութեան եւ համատեղ գործակցութեան կարեւորութիւնը, միաժամանակ անդրադառնալով այն պատմական իրականութեան, որ դարեր շարունակ մեր եկեղեցին կանգնած է մեր ժողովուրդին կողքին: Ան յատուկ կարեւորութեամբ կանգ առաւ յատկապէս ամերիկեան այս ամերիկեան հայութեան միասնականութեան եւ հայապահպանումի ի խնդիր տարուող աշխատանքներուն վրայ, կարեւորեց դերը կրթական հաստատութեանց ու անհրաժեշտութիւնը հայ լեզուի պահպանման: «Վստահ ենք, որ մեր լաւագոյն օրերը մեր դիմացն են», յայտարարեց հայրենի գլխաւոր հիւպատոսը ու բոլորին մաղթեց բարիք, սեր ու երջանկութիւն, ապա նաեւ գործակցական ծառայութիւն՝ մեր հայրենիքին ու ժողովուրդին:

Տիար Արմէն Լիլոյեանի խօսքէն ետք, սպիտակ պաստառի վրայ երաժշտութեան ընկերակցութեամբ ցուցադրուեցաւ կարճ ժապաւէն մը, որ ներկաներուն յիշողութեան բերաւ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի գնման առաջին օրէն մինչեւ օրս տարուող բարեփոխման ու բարեզարդման աշխատանքներուն ընթացքը, անցնելով հիմերու օրհնութենէն, , Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատուռի սիւներու օծումէն ու կառուցումէն եւ Վեհափառ Հայրապետին ձեռամբ անոր խորանին ու խաչին օծումէն ու օրհնութենէն:

### **ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ**

Ճաշի սպասարկութենէն ետք, կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերին տաղանդաւոր երգիչներ Անահիտ Ներսիսեան եւ Ռազմիկ Մանսուրեան, դաշնակի վրայ ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի: Երգացանկը կազմուած էր շարականներէ եւ հայրենասիրական երգերէ:

Պարմանուհիներ Սօնա եւ Սիլվի Կեօքլեզեան քոյրերը, Ազգ. Վ. եւ Ա. Շամլեան Վարժարանի աշակերտուհիներ, ներկայացուցին հայկական երկու մենապարեր: Փոքրիկն Արամ Մանուկեան այս տարի եւս ներկաները հմայեց իր շուիով, դաշնակի վրայ ընկերակցութեամբ իր ուսուցիչին՝ համբաւաւոր երաժիշտ Արարատ Պետրոսեանի:

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՕՍՔԸ**

Հանդիսավար Հայր Սուրբը բեմ հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը՝ արտասանելու իր օրհնութեան ու գնահատանքի խօսքը:

Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին կանգ առաւ Ս. Ծննդեան տօնի խորհուրդին ու Աստուածորդւոյն աշխարհի առաքելութեան անժամանցելի պատգամին: Ան ողջոյնի ու երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, ապա, հակիրճ կերպով անդրադարձաւ Ազգային Առաջնորդարանի առաքելութեան գլխաւոր մարզերուն, վեր առնելով այն իրողութիւնը, որ նոր շէնքի ծրագիրին ամբողջացումով ու գրասենեակներուն մօտալուտ մայր հաստատութիւն վերադարձով, Ազգ. Առաջնորդարանի դիմաց պիտի պարզուին աշխատանքի նոր ու ընդարձակ դաշտեր: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Ազգ. Առաջնորդարանի բոլոր ծրագիրներուն իրականացման աջակցողներուն, անոնք ըլլան բարերարներ, ազգային մարմիններու եւ միութեանց անդամներ թէ հաւատացեալներ, որոնք նիւթական, բարոյական ու աշխատանքային աջակցութեամբ զօրավիգ են Ազգ. Առաջնորդարանի գործին: Ան շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց գլխաւոր հովանաւոր եւ հիւրընկալ Գարուան ընտանիքին, եւ այլ բարերար ընտանիքներու, նշելով, որ բոլոր նուիրատուներուն ու հովանաւորներուն անունները արձանագրուած են այս երեկոյթին առիթով հրատարակուած գրքոյկին մէջ: Նկատել տալով, որ 2008ը պիտի ըլլայ Արեւմտեան մեր Թեմի հաստատման 35-ամեակի տարին, ան իր խօսքը եզրափակեց մաղթելով, որ Ս. Ծննդեան խորհուրդը մնայ անհատներու եւ պետութեանց ծրագիրներն ու քայլերը առաջնորդողը ու նոր տարուան ու յառաջիկայ աշխատանքներուն համար յաջողութիւն մաղթեց բոլորին: (Առաջնորդ Սրբազանին խօսքը կու տանք առանձին):

Երեկոն վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ» աղօթքով, ապա նաեւ «Կիլիկիա»ի, Հայրապետական Մաղթանքին ու «Մեր Հայրենիք» քայլերգին յոտնկայս եւ հաւաքական երգեցողութեամբ:

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ  
ԱՐՏԱՍԱՆՈՒՄԾ՝ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԸՆԹՐԻՔԻՆ**  
(Շաբաթ, 6 Յունուար 2007-ին)

**«Այսօր տօն է Ս. Ծննդեան, Աւետիս...»**

**«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհեմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»:**

Շարականներու այս բառերով ու անոնց բովանդակած բազմադարեան խորհուրդներով է որ այսօր խմբուած ենք այս մտերմիկ յարկին տակ, զիրար ողջունելու Աստուածորդուն Ս. Ծննդեան ու աստուածայայտնութեան տօնին առիթով, միասնաբար ապրելու հոգեկան ցնծութեան պահ մը եւ վերանորոգուելու քրիստոնէական մեր հաւատքին մէջ:

Աստուածորդուն Ս. Ծննդեան պատգամները, սիրոյ, խաղաղութեան ու հաճութեան զգացումները զիս կը համակեն այս պահուս, երբ կ'ողջունեմ բոլորիդ ներկայութիւնը այս սրահին մէջ: Վստահ եմ, որ այս մտածումներն ու զգացումները ձեզ եւս համակած են երէկ երեկոյէն ի վեր, երբ ճրագալոյցի արարողութեամբ սկսանք տօնախմբել քրիստոնէական աշխարհի մեծագոյն տօնը: Այս զգացումները ուռճացան ու աւելի եւս տարածուեցան այս առաւօտ, երբ մեր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագով եւ ջրօրհնէքով աւետեցինք իրարու.-

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ

Յայտնեցաւ եւ մկրտեցաւ

Ձեզի եւ մեզի մեծ աւետիս:

Փառք, հազար փառք Աստուծոյ, որ ահաւասիկ անգամ մը եւս մեզի պարգեւեց իր միածին որդւոյն ծննդեան խորհուրդը միասնաբար տօնախմբելու այս պահը: Համաձայն տարիներու մեր աւանդութեան, մենք այս երեկոն սկսանք հաւաքական աղօթքով, միասնաբար երգեցինք Ս. Ծննդեան շարականներն ու երգերը: Մեր աղօթքներն ու շարականները մեր սիրտերէն բխող երախտագիտութեան զգացումներ են հանդէպ Երկնաւոր Հօր, որ մարդկութեան, այսինքն՝ մե՛ր սիրոյն աշխարհի զրկեց իր Միածինը, որպէսզի սիրոյ, խաղաղութեան, արդարութեան եւ վերանորոգութեան ապրումները տարածուին բոլորիս սիրտերուն մէջ:

Արդարեւ, սիրելիներ, Ս. Ծննդեան պատգամը, որեւէ ժամանակէ աւելի, այսօր ուժեղ կը հնչէ մարդկութեան համար, երբ նիւթական ու նիւթականացած աշխարհի բոլոր այլասերող ալիքները, մարդկութիւնը տագնապներու մատնող պատերազմներն ու խռովութիւնները կը յուզեն մեզ ու քրիստոնէական հաւատքով առաջնորդուող մարդկութիւնը: Փոխադարձ սիրոյ, հանդուրժողութեան եւ խաղաղութեան զինուորները դառնալու եւ իրարու օգնելու պատգամները, Յիսուս Մանուկի ծնունդէն 2007 տարիներ ետք, այսօր ալ մեզի կը հասնին հրեշտակներուն քաղցրահնչիւն երգերով ու մարդկութեան փոխանցուող անժամանցելի աւետիսով, ու մեզ բոլորս կը հրաւիրեն հետեւորդները ըլլալու Բեթղեհեմի վերեւ փայլած աստղին: Դարեր առաջ, փայլուն աստղը եղաւ բարի հովիւներուն եւ իմաստուն մոզերուն առաջնորդը, անոնց քայլերը ուղղեց դէպի Բեթղեհեմի համեստ մտուրը. Աստուածորդին չէր ծնած պերճաշուք պալատներու մէջ, այլ անոր ծննդավայրը եղաւ համեստ մտուր մը, այդպէսով մարդկութեան տալով համեստութեան ու խոնարհութեան առաջին պատգամը: Հովիւներն ու մոզերը եղան Յիսուս Մանուկին առջեւ առաջին խոնարհողներն ու նուէրներ մատուցողները, իրենց կարգին մարդկութեան տալով նուիրաբերումի առաջին օրինակը, գործնապէս ցոյց տալով,

որ մարդկության փրկության համար իբրև ընծայ ղրկուած Աստուածորդին ի՛նք ալ արժանի է ընծաներու, մեր սիրոյն, մեր հաւատարմութեան, անոր հաստատած եկեղեցի՛ն ալ պէտք ունի գուրգուրանքի, ընծայաբերումի, այնպէս՝ ինչպէս պիտի ընէինք իրեն համար:

Զիչ առաջ երգեցինք «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականը. աստուածորդւոյն Ս. Ծնունդը աւետող այդ շարականը անգամ մը եւս մեզի բերաւ անժամանցելի պատգամ մը, որ պէտք է տոգորուինք ու առաջնորդուինք սիրով, հաճութեամբ, խաղաղութեամբ ու արդարութեամբ: Նոյն խորհուրդը մեզի կը թելադրէ նաեւ դէմ կանգնիլ բոլոր ժամանակներու հերովդէսներուն ու անմարելի լոյսը մարել փորձողներուն, որպէսզի Բեթղեհեմի փայլուն աստղը մնայ մեր ու բոլոր հաւատացեալ մարդոց առաջնորդը, կեանքը հունաւորողը:

Սիրելի հարազատներ,

Այս հանդիսաւոր ու բազմախորհուրդ երեկոյին, եւ առ Աստուած մեր բարձրացուցած շնորհապարտութեան աղօթքէն ետք, կ'ուզեմ որդիական սիրով ու երախտապարտութեամբ առջուն ողջոյնի առաջին խօսքս ուղղել մեր սիրելի Վեհափառ Յայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որ պահպանելով տարիներու իր հայրական ասանդութիւնը, մեզի ուղղած էր իր օրհնութեան խօսքն ու հայրապետական պատգամը: Ան նաեւ կը մնայ մեր ուղեցոյցը մեր աշխատանքներուն մէջ: Անմիջապէս յիշեցնեմ, որ Վեհափառ Յայրապետի յանձնարարութեամբ ու թելադրանքով, մենք եւս, մեր Թեմին մէջ 2006 տարուան ընթացքին գլխաւորաբար աշակերտական հանդիսութիւններով տօնախմբեցինք Յայ Դպրոցի Տարին. Վեհափառ Յայրապետը 2007 տարին նուիրած է Յայ Լեզուին: Այս առումով, Յայ Լեզուին նուիրուած մեր յառաջիկայ տօնախմբութիւնները պիտի ըլլան ուղղակի շարունակութիւնը 2006ի տօնախմբութիւններուն, որովհետեւ, սիրելիներ, Յայ Դպրոցն ու Յայ Լեզուն անբաժանելի եւ գիրար լրացնող արժէքներ են հայկական մեր կեանքին ու առօրեային մէջ:

Ողջոյնի յատուկ խօսք ունիմ մեր հայրենի պետութեան ներկայացուցիչին՝ Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանին եւ հիւպատոս Պրն. Յարութիւն Գոճոյեանին. Պրն. Արմէն Լիլոյեան այս տարի առաջին անգամ ըլլալով մեզի հետ է ու նորագոյն անդամն է մեր այս մեծ ընտանիքին, ինչպէս որ մեր Թեմը մէկ անբաժանելի անդամն է Յայաստանով մարմնաւորուած հայութեան: Կ'ողջունեմ ներկայութիւնը Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Րաֆֆի Մանուկեանի եւ ընտրեալ պաշտօնատարներու: Ողջոյնի յատուկ խօսք ունիմ նաեւ Լիբանանի հիւպատոս Պրն. Շարայէլ Ուահպէի, որուն ներկայութիւնը վայելած ենք անցեալ տարիներուն. ան այսօր մեզի հետ չէ ֆիզիքապէս, սակայն վստահ ենք որ մեզի հետ պիտի ըլլայ միշտ. ուրախ ենք, որ ան արժանացած է պաշտօնի բարձրացման եւ ստացած է դեսպանի աստիճան: Այս առիթով, կը մաղթենք որ հայութեան համար երկրորդ հայրենիք հանդիսացող Լիբանանը շուտով վերագտնէ իր խաղաղութիւնը, վերականգնումի երթն ու համերաշխութեան ոգին: Կ'աղօթենք առ Աստուած, որ այս փոքր հայրենիքին նորագոյն վերքերը եւս ամոքէ եւ անոր ընծայէ վերականգնումի, վերակենսաւորման ու բարգաւաճման իր արդար ու արժանի բաժինը:

Այս պահուն, սրտի անհուն գոհունակութեամբ կ'ողջունեմ ներկայութիւնը մեր ազնիւ հիւրերուն, բարերարներուն եւ բարեկամներուն: Մեզի հետ են միաբանակից հոգեւոր եղբայրներ եւ արժանապատիւ Յովիներ, Ս. Աթոռոյս Ազգային

Կեդրոնական Վարչութեան, Ազգային Վարչութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ու Կեդրոնական Կոմիտէի, Հ.Ս.Ը.Մ.ի, ՀՕՄի, Համազգայինի, Հայ Դատի, մամուլի եւ հայկական մեր միութեանց ու հաստատութեանց ներկայացուցիչները, Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամներ, ծխական շրջաններու հոգաբարձութեանց անդամներ, Թեմիս Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամներ, Տնօրէններ եւ դաստիարակներ:

Շնորհակալութեան զգացումներով կ'ողջունեմ նաեւ Գարուլան բարերար ընտանիքը, որ Ազգային Առաջնորդարանիս մշտադիւրս բարերարներէն մէկը ըլլալու կողքին, այս տարի անգամ մը եւս սիրայօժար կերպով յանձն առաւ մեր այս ձեռնարկին հիւրընկալումը: Շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ունիմ մեր բոլոր բարերարներուն, բարեկամներուն, Տիկնանց Օժանդակ Մարմինին, **մեր** անձնակազմին եւ բոլոր անոնց, որոնք նիւթական, բարոյական ու աշխատանքային ներդրումով մասնակից են մեր ժողովրդանուէր առաքելութեան կենսագործման: Մեր բարերարներուն ու հովանաւորներուն ցանկը ձեր տրամադրութեան տակ ունիք այսօրուան յայտագիրը ընդգրկող գրքոյկին մէջ:

Սիրելիներ,

Մեր անհատական ու հաւաքական կեանքի առօրեային մէջ, մենք ամէն օր, ամէն ժամ Աստուծոյ փառք տալու պատճառներ ու առիթներ կ'ունենանք: Ես այսօր կ'ուզեմ շնորհակալութեան ու երախտապարտութեան յատուկ աղօթք բարձրացնել, որովհետեւ, սիրելիներ, Ազգային Առաջնորդարանիս համար այս օրերը պատմական ու յիշատակելի են: Տարիներու իմ ու ձեր երազը այսօր ամբողջականօրէն ու վերջնականօրէն իրականութիւն դարձած է. հոգեկան ցնծութեամբ ու հպարտութեամբ կ'ուզեմ յայտարարել, որ Ազգային Առաջնորդարանիս նոր շէնքի վերակերտման ու բարեգարդման աշխատանքը հասած է իր լրումին, քանի մը օր առաջ ամբողջացաւ նաեւ կահաւորումի բաժինը եւ մեր գրասենեակները շուտով պիտի վերադառնան նոր շէնք: Մտերմաբար ըսեմ, որ մեր գրասենեակներուն տեղափոխման համար սպասեցինք այս ձեռնարկին իրագործման, որպէսզի կարելի ըլլար խուսափիլ որեւէ անակնկալ խաչաձեւումէ: Այս իրագործումներուն համար, վստահ եմ, որ դուք եւս ինծի չափ ուրախ էք ու հպարտ, ոչ միայն անոր համար, որ երազով սկսած ծրագիրը այսօր լիակատար կերպով մարմնաւորուած է, այլ մանաւանդ անոր համար, որ դուք եւս, իբրեւ բարերարներ ու բարեկամներ, մեր եկեղեցիներու ներկայացուցիչներ, ժողովականութեան անդամներ ու Ազգային Առաջնորդարանիս առաքելութեան զօրակիցներ, նիւթական, բարոյական ու աշխատանքային կարելի բոլոր միջոցներով մասնակից եղաք այս իրագործումին, միասնաբար կերտեցինք Ազգին Տունը: Հազար գնահատանք ու բիւր շնորհակալութիւն բոլորիդ, բայց մասնաւորաբար Ազգային Առաջնորդարանիս գլխաւոր բարերարներուն՝ Գարուլան, Պետրոսեան, Փիլաւճեան, ինչպէս նաեւ բարերարներ Կիրակոսեան, Գասիմեան, Սիլվահեան, Տէր Ղազարեան ընտանիքներուն, Forest Lawn հիմնարկութեան, Շէնքի Յանձնախումբի ատենապետին ու անդամներուն, որոնց զոհաբերութիւնն ու նուիրումը պիտի մնան անմոռանալի: Այս առիթով, շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ունիմ Ս. Նահատակաց եկեղեցւոյ Հովիւին եւ եւ հոգանարձութեան, որոնք Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի բարեփոխման աշխատանքներու շրջանին, սիրայօժար կերպով հիւրընկալեցին մեր գրասենեակները:

Սա պահուն, ես չեմ ուզեր խօսիլ տարուած աշխատանքներու պատմութեան մասին. բոլորդ ալ գիտէք, թէ ինչ հանգրուաններէ անցաւ այս հաւաքական գործը, սկսելով կալուածին ձեռք բերման օրէն մինչեւ վերջին աղիւսի գետեղումն ու հայկական քարին ու խաչին ամրացումը: Կը նախընտրեմ խօսիլ ապագային մասին, որովհետեւ, սիրելիներ, մեր գրասենեակներուն նոր շէնք վերադարձը բոլորիս համար նոր սկիզբի մը ազդանշանն է. ըսել չեմ ուզեր, թէ ամէն բան սկիզբէն պիտի սկսինք, այլ, ինչպէս Ամանորի այս օրերը մեր կեանքերուն ու աշխատանքներուն հաշուեյարդարի ու նորին մեկնարկի հանգրուանն է, այդպէս ալ, 2007ի սեմին մեր գրասենեակներուն մայր հաստատութիւն վերադարձը կը նշէ նոր սկիզբ մը, կը կերտէ հանգրուան մը, որուն վրայ կանգնած, աւելի հանգիստ ու ինքնավստահ աչքերով կը նայինք մեր դիմաց տարածուող եւ օր ըստ օրէ ընդարձակուող աշխատանքի դաշտերուն: Ծանօթ էք արդէն, որ մեր Թեմի աշխատանքային դաշտերուն ընդարձակման կողքին, կը տարածուին նաեւ մեր ծխական շրջանները: Մեր ծխական նորագոյն անդամն է Լաս Վեկասի Յայաստանեայց Առաքելական եկեղեցին, որ վերակազմուեցաւ անցեալ Մարտին եւ կը գործէ յարաճուն աշխուժութեամբ: Իսկ վերջին երկու տարիներուն, մեր Թեմի ծխական ընտանիքին միացած են Քոլորատոն, Ռիվըրսայտն ու Քրետենթա Յովիտը: Վերջինը շուտով պիտի ունենայ իր ընտրեալ ծխական մարմինը՝ հոգաբարձութիւնը, ինչպէս նաև Ազգային Երեսփոխանական Ժողովին մէջ իր ներկայացուցիչները: Կը յուսանք, որ Ռիվըրսայտի ու Լաս Վեկասի ծխական շրջանները եւս հետեւին Քրետենթա Յովիտի աշխոյժ համայնքի ընթացքին:

Ինչպէս անցեալ տասնամեակներուն, նաեւ յառաջիկային, Ազգային Առաջնորդարանիս ծառայական աշխատանքները պիտի շարունակուին ու ծաւալ պիտի ստանան ձեզի նման նուիրեալներու հետ գործակցաբար: Ձեզի հետ ձեռք ձեռքի տուած, միակամ ու միասնական կերպով պիտի աշխուժացնենք մեր եկեղեցւոյ, ժողովուրդին ու մանաւանդ մեր նոր սերունդներուն կարիքներուն հասնելու գործը, աւելի մեծ թափ տալով այն ազնիւ դրօշարշաւին, որ սկիզբ առած է Աստուածորդոյն աշխարհի առաքումով ու շարունակուած՝ քրիստոնէութեան լոյսը Յայաստան բերող Առաքեալներուն, Լուսաւորիչ Յայրապետին ու անոնց ջանք բարձր պահած մեր թարգմանիչ սրբազան հայրերուն գործքով: Հետեւաբար, 2007ի տարեմուտն ու Ս. Ծննդեան այս տօնը, բազմաթիւ իմաստներով, ուխտի վերանորոգման հանգրուան մըն է բոլորիս համար, որովհետեւ, ինչպէս նշեցի, Ազգային Առաջնորդարանս մարմնաւորումն է մեր ժողովուրդի հաւատքին ու կամքին, անոր գործերն ալ պիտի շարունակուին հաւաքական աշխատանքով, բոլորիս նիւթական ու բարոյական ներդրումներով: Աւելին, մենք յառաջիկայ տարի պիտի գտնուինք նաեւ այլ ուշագրաւ հանգրուանի մը վրայ, որովհետեւ 2008 տարին պիտի նշէ մեր Թեմի 35րդ տարեդարձը, նկատի ունենալով, որ 1973ին, մեր Թեմը սկսաւ գործել իբրեւ առանձին Թեմ: Հետեւաբար, այժմէն իսկ ձեզ կը հրաւիրեմ մտածելու այս մեծ տարեդարձին մասին:

Այս ներդրումները կազմակերպելու եւ համակարգելու համար, Ազգային Առաջնորդարանս վերջին տարիներուն ձեռնարկած է յատուկ հիմնադրամներու ստեղծման: Այս առիթով, կ'ուզեմ անգամ մը եւս շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղել բոլոր այն բարերարներուն, որոնք երկու տարի առաջ մեզի օժանդակեցին հաստատելու Ազգ. Առաջնորդարանի «Պարտամուրհակի մարումի հիմնադրամը» - Mortgage Burning Fund, որպէսզի կարելի ըլլայ հատուցել

շէնքին գնման առիթով կնքուած դրամատնային փոխառութիւնը: Լիայոյս եմ, որ այս հիմնադրամը շուտով պիտի արդարացնէ իր նպատակը: Այս ծիրին մէջ, կ'ուզեմ հպարտութեամբ արձանագրել ու յիշեցնել բոլորիդ, որ շէնքի բարեփոխման աշխատանքները կատարուեցան առանց դրամատնային նոր փոխառութիւններու, որովհետեւ անհատ բարերարներ, միութիւններ թէ ազգայիններ սիրայօժար կերպով հոգացին մատրան ու գրասենեակներուն բոլոր կարիքները, դառնալով հովանաւորներ շէնքի տարբեր բաժիններուն: Բոլորին անուններն ալ ծանօթ են ձեզի:

Ազգ. Առաջնորդարանի Շէնքի եւ Պարտքերու Մարումի հիմնադրամներուն կողքին, Ազգ. Առաջնորդարանս ունի նաեւ շարք մը այլ հիմնադրամներ, որոնք հաստատուած են կրթանպաստի, կրօնական հրատարակութիւններու ու նմանօրինակ բարի նպատակներու համար: Այս հիմնադրամներուն շնորհիւ է որ կրնանք հոգալ մեր պաշտօնաթերթին՝ «Յոգեւոր Պրիսմակ»ին, Ազգային Առաջնորդարանիս կայքէջին, պատկերասփիւռի Կիրակնօրեայ մեր յայտագիրին ու նմանօրինակ աշխատանքներու կարիքները: Ուրախ ենք, որ հաղորդակցութեան արդի միջոցներուն եւ մամլոյ հաղորդակցութեանց ճամբով, մեր հաւատացեալ ժողովուրդը օրը օրին տեղեակ կը դառնայ մեր գործունէութեան: Մեր ծառայական աշխատանքներուն ընդարձակման եւ անոնց զուգահեռ՝ ծաւալ ստացող կարիքներու համար, անհրաժեշտ է հաստատել այլ յատուկ հիմնադրամներ եւս, endowment fund-եր, որպէսզի մեր նուիրաբերող ազգայինները անոնց միջոցով կարենան մասնակից ըլլալ մեր բազմապիսի ծառայութիւններուն, Ազգային Առաջնորդարանիս նիւթական գործառնութիւնները դնելով աւելի հաստատ ու հաւասարակշռուած հիմերու վրայ: Եւ ուրախ եմ յայտնելու, որ Ազգ. Առաջնորդարանիս հովանիին տակ ստեղծուած կամ մեր տրամադրութեան տակ դրուած բոլոր հիմնադրամները կը ծառայեն իրենց ճշդուած նպատակներուն, իբրեւ բարիք կը բաշխուին մեր ժողովուրդի կարիքներու տարբեր դաշտերուն վրայ, առաջնորդուելով հաւատարիմ ծառային մասին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի առակին սկզբունքով:

Այս երեկոյ, կ'ուզեմ յատուկ կերպով կանգ առնել նաեւ մեր ծառայական աշխատանքի այն բաժինին վրայ, որ կը մատուցուի մեր երիտասարդներուն ու պատանիներուն: Ազգի մը, հաւաքականութեան մը ապագան իր նորահաս սերունդներն են, որոնք կը կարօտին ու արժանի են գուրգուրանքի, հոգածութեան ու բառին ամենէն լայն իմաստով դաստիարակութեան: Ազգային Առաջնորդարանս ու անոր հովանիին տակ գործող մեր եկեղեցիները, Կիրակնօրեայ ու ամենօրեայ դպրոցները, մեր երիտասարդական միութիւնները բոլորիս առաջնահերթ մտահոգութեան առարկաներն են անկասկած: Հայրենի հողերէն հեռու ապրողներուս համար, նոր սերունդի քրիստոնէական արժէքներով ու ազգային ժառանգութիւններով հարստացումը, անոնց հոգիներուն ու միտքերուն հայօրէն կերտումը ամենէն ազնիւ մարտահրաւերներուն դիմաց կը դնէ Ազգային Առաջնորդարանս ու անոր բոլոր գործակիցները: Այս դաշտին մէջ մեծ է դերը եւ առաքելութիւնը Առաջնորդարանիս Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին, որուն գործնական աշխատանքները կը տանին մեր երկու միաբանակից եղբայրները՝ Հայր Միւռնն ու Հայր Պարթեւ, ինչպէս նաեւ մեր հոգեւոր հովիւները. անոնց աշխատանքը արժանի է բարձր գնահատանքի: Եւ ինչպէս որեւէ աշխատանք՝ այս գործը եւս չի կրնար լիակատար ըլլալ, եթէ

իւրաքանչիւրս մեր ներդրումը չունենալք անոր մէջ: Դուք գիտէք, որ նիւթականացած մեր աշխարհին մէջ այս ու նմանօրինակ ազնիւ աշխատանքներ ինչպիսի կարիքներ կը ստեղծեն, սակայն նաեւ գիտէք, որ մենք այդ բոլորը կը կատարենք առանց նիւթական լայն հնարաւորութիւններու, հաւատալով որ նիւթը միակ բանալին չէ ազնիւ գործի, այլ նուիրաբերումը, գոհողութիւնը եւ կաթիլ առ կաթիլ գոյացող աննիւթական գետերն ալ կրնան դժուարութեանց պատնէշներ քանդել, աշխատանքի ջաղացքին անիւը դարձնել աշխոյժ կերպով:

Աշխատանքի նոր փուլին համար, մեր դիմաց ունինք բազմաթիւ ծրագիրներ ու դաշտեր: Այս առիթով, ուրախ եմ անտելու, որ ընդամաջելով Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի փափաքին, եւ Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան հետ համախորհուրդ, ձեռնարկած ենք նոր քահանաներու պատրաստութեան դասընթացքի մը ծրագիրին մշակման: Գիտէք, որ մեր հաւատացեալ ծխականներու թիւին աճն ու անկէ բխող պահանջները աշխատանքային նոր մարտահրաւերներու դիմաց կը դնեն մեզ. իսկ մարտահրաւերներ դիմագրաւելու մէկ ձեւ կայ. ծրագրել ու աշխատիլ այդ նպատակով: Արդէն կեանքի կոչած ենք յատուկ յանձնախումբ մը, որ մշակած է երիտասարդ նուիրեալներ մեր ժողովուրդին ծառայական առաքելութեան հրաւիրելու ծրագիր մը: Կ'ըսեն, որ եթէ գործ մը լաւ սկիզբ ունենայ, անկա կեսով ամբողջացած կ'ըլլայ: Եթէ այս խօսքը ճիշդ է, ուրեմն մենք ալ ճիշդ ճամբու մէջ ենք: Կը յուսանք, որ մեր ծրագիրները մօտ ատենէն փոխադրուին իրականացման դաշտ եւ մենք շուտով աճեցնենք մեր Թեմի կարիքներուն համապատասխան պատրաստութեամբ գիւտորագրեալներուն բանակը:

Ահաւասիկ այս կամքով ու պատրաստակամութեամբ կը դիմաւորենք 2007 տարին ու ապագան, Ս. Ծննդեան այս տօնին առիթով ու քրիստոնեական հաւատքին մեզի շնորհած ուժականութեամբ կը վերանորոգենք մեր ուխտը՝ ծառայելու մեր եկեղեցւոյ ու մեր ժողովուրդին: Այս կամքին եւ ուխտին մասնակից են մեր հոգեւոր եղբայրները, մեր ժողովականութիւնը, մեր կրթական մշակներն ու մեր բոլոր բարերարները եւ գործակիցները, անոնք ըլլան անհատներ, միութիւններ, կազմակերպութիւններ թէ հաստատութիւններ:

Մեր յառաջիկայ աշխատանքներուն պիտի ձեռնարկենք՝ իբրեւ մեկնակետ ունենալով այն պատգամը, որ մեզի կը ներշնչուի Յիսուս Մանուկի ծննդեան խորհուրդով: Մենք ալ անոր պէս պիտի ըլլանք խոնարհ եւ համեստ, արդար ու արդարամիտ, միաժամանակ դառնալով առաքեալները սիրոյ ու հաճութեան, ազնիւ ու աստուածահաճոյ գործի ու ծառայութեան: Պիտի գործենք արդար ու առարկայական մօտեցումով, հաւաքական շահերը գերադասելով անհատական հաշիւներու եւ մասնակի նկատառումներու, ի հարկին՝ անհատականը զոհաբերելով՝ հաւաքականին, ինչպէս որ Աստուածորդին իր կեանքն ու առաքելութիւնը նուիրեց ողջ մարդկութեան:

Աստուածորդւոյն աշխարհ առաքումը մարդկութեան ընծայեց բազմապիսի պատգամներ, որոնք դարերու թաւալումին հետ չեն հիւսցած ու մոռացութեան չեն մատնուած, այլ կը մնան այժմեական: Արդարեւ, Բեթղեհեմի վերեւ ծագած փայլուն աստղը դարեր շարունակ մնաց ու ապագային ալ պիտի մնայ փայլուն. անոր նայեցան մեր պապերը, մեր եկեղեցւոյ ծառայած սրբազան հայրերը: Մենք ալ հրաւիրուած ենք մեր աչքերը ուղղելու դէպի այդ աստղը, մեր քայլերը առաջնորդել անոր լուսաւորած ուղիով: Մենք եւս մեր կեանքի իւրաքանչիւր օրը պիտի մնանք

Բեթղեհեմի համեստ մսուրին ուխտաւորները եւ անոր պատգամները կենսաւորողները, մարմնաւորողները:

Այս հաւատքով, այս համոզումով, այս մաղթանքով ու ներշնչումով ալ սա պահուս կը շնորհաւորեմ ձեզ բոլորդ, ըսելով,

Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ  
Շնորհաբեր Նոր Տարի բոլորիդ

Հաւատքով ու ներշնչումով, աղօթքով կը խոնարհիմ Աստուծոյ առջեւ, ինդրելով, որ բոլորիս ընծայէ առողջութիւն, յաջողութիւն, ծառայութեան ու նուիրումի վերանորոգ ոգի, սեր, սեր եւ դարձեալ սեր:

Կը մաղթեմ, որ մեր մայր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը յառաջիկայ տարուան ընթացքին նոր քայլեր առնեն վերականգնումի ու բարգաւաճման երթին մէջ,

Թող բարձրեալն Աստուած երկար կեանք պարգեւէ մեր զոյգ Հայրապետներուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Թող մեր հայրենի պետութեան պետական առաջնորդներն ու ծառայողները յաւելեալ իմաստութեամբ եւ հոգեկան ամրութեամբ լեցուին, առաջնորդելու համար մեր հայրենիքին ու ժողովուրդին բարգաւաճման երթը,

Թող Երկնաւոր Հայրը Սփիւռքի հայութեան ու անոնց շարքին՝ մեր Թեմի շրջանի բոլոր միութեանց ու հաստատութեանց առատօրէն բաշխէ իր բարիքները, որպէսզի մեր հաւաքական կեանքը ըլլայ աւելի պայծառ, մեր միացեալ առաքելութեան իրագործումը ընթանայ անվտանգ ու աշխոյժ:

Իսկ ամերիկեան մեր հայրենիքին պարգեւէ բարգաւաճում, խաղաղութիւն եւ անվտանգութիւն, որովհետեւ կը հաւատանք, որ այս երկրի առաջնորդներուն իմաստութիւնը մեծ դեր ունի աշխարհի խաղաղութեան, ժողովուրդներու միջեւ հաճութեան ու համերաշխ գործակցութեան իմաստով:

Եկեք, ուրեմն, անգամ մը եւս ձայնակցինք հրեշտակներու աւետիսին եւ երգենք ըսելով՝

Փառք ի բարձունս Աստուծոյ,  
եւ յերկիր խաղաղութիւն,  
ի մարդիկ հաճութիւն...

## **PRELATE'S TRADITIONAL CHRISTMAS DINNER A GREAT SUCCESS**

- SUBSTANTIAL DONATIONS MADE TO VARIOUS WESTERN PRELACY FUNDS

On Saturday, January 6, on the Feast of the Nativity and Theophany of our Lord, Jesus Christ, the Prelate's traditional New Year's and Christmas Dinner took place at Bagramian Hall of Holy Cross Cathedral in Montebello with over 600 guests in

attendance. On Saturday morning, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, had officiated over Holy Mass, the blessing of water ceremony, and delivered his sermon at St. Mary's Church in Glendale.

The Prelate's Dinner, initiated by the Religious and Executive Councils and organized by the Prelacy Ladies Auxiliary Guild, was sponsored by Prelacy benefactors Mrs. Tina Carolan and family. Among the invited guests in attendance were Consul General of Armenia Mr. Armen Liloyan and Consulate staff, Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikijian, A.R.F. Bureau member Dr. Viken Hovsepian, A.R.F. Central Committee representative Mr. Avedik Izmirlian and members, national representatives assembly delegates, Board of Trustees, representatives of the Board of Regents, Homenetmen, A.R.S., Hamazkayin, A.N.C., and media, as well as Prelacy benefactors, sponsors, and friends.

The evening began with Master of Ceremonies Very Rev. Fr. Barthev Gulumian greeting the guests and announcing the start of the program with the entrance of the Prelate and clergy in a procession. With candles in hand, the procession entered the hall singing hymns for the occasion, after which the guests participated in the ceremony of the Tatak.

On behalf of the Ladies Auxiliary Chairperson Mrs. Mariam Karapetian offered her remarks, followed by greetings by Executive Council Chair Dr. Garo Agopian who expressed gratitude for the completion of the new Prelacy building and urged the guests to continue their support of the Prelacy's mission.

In His taped Christmas message projected on a large screen, H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, greeted the Prelate and guests expressing gratitude for the completion of the building renovation project. His Holiness also commended the Prelate and affiliates of the Prelacy for their service to the Armenian people. He then spoke of how the New Year and Christmas is a time for us to ruminate and remember that during Christ's mission on earth, the old was destroyed and a new world was created, stressing that we should not completely discount the past but rather learn from our past experiences and begin anew.

Following His Holiness' message, Hayr Barthev invited Consul General Armen Liloyan to offer his remarks. Mr. Liloyan expressed gratitude for the opportunity to collectively celebrate and be filled with the messages of the Nativity and Epiphany of our Lord. He emphasized that this is a time for us to reflect on our past endeavors and head towards the future with the messages of Christmas as our guide. The Consul also stressed the importance of cooperation and collaboration between Armenia and the Diaspora, emphasizing the invaluable role Diaspora Armenians play in the preservation of Armenian education and language.

Subsequently, a brief video was shown chronicling the progress of the building renovation from the blessing of the foundation to the completion of the structure.

After dinner, guests were entertained with songs by Anahit Nercissyan and Razmik Mansourian, accompanied on the piano by Prof. Levon Aprahamian, dances by Chamlian students Sona and Silva Geokgezian, and Aram Manoukian on the Armenian flute accompanied on piano by his teacher Mr. Ararat Bedrossian.

Hayr Barthev then invited the Prelate to deliver his Christmas message.

The Prelate first spoke of the timeless message of the Nativity and of Christ's earthly mission. He expressed his gratitude to His Holiness, and reflected on the

mission of the Prelacy, noting that the forthcoming relocation to our new offices will offer us new beginnings and the launch of new fields of activity. The Prelate thanked all the supporters who continuously offer their moral and financial support to the Prelacy's endeavors. He then offered special thanks to the Carolan family, sponsors of the traditional Armenian Christmas Dinner, as well as to all the sponsors and donors whose names were listed in the evening's program. The Prelate concluded by noting that in 2008 we will celebrate the 35<sup>th</sup> anniversary of our Prelacy and wished for the messages of Christmas to guide our path to success in the coming years (Text of the Prelate's message is provided separately).

The evening concluded with the "Bahbanich" prayer, followed by the collective singing of "Giligia", "E Veh Partsants", and "Mer Hayrenik".

**PRELATE'S MESSAGE AT THE CHRISTMAS DINNER**  
(January 6, 2007)

With the Good Tidings of Christmas and the messages of love, peace, and goodwill, I greet you all as we are gathered here to celebrate the Glorious Birth and Epiphany of our Lord, Jesus Christ, and to be renewed by our Christian faith. Glory to God who, once again, has granted us this blessed opportunity to collectively offer gratitude to our Lord through prayers and hymns.

2007 years after the Glorious Birth of Christ, the timeless message of the Nativity continues to invite us to follow the bright star of Bethlehem. Centuries ago, the bright star guided the shepherds and the wise men to the humble manger where Jesus was born. The fact that Jesus was born in a humble manger conveys to us the message of humility. The shepherds and wise men were the first to revere Jesus and offer Him gifts, thus establishing the precedent for benevolence and teaching us by example that just as Jesus was worthy of gifts, love, and faithfulness, the church established in His name also needs the same care and devotion with which we dedicate ourselves to Him. The Great and Marvelous Mystery of the Nativity continues to direct us to stand up to the Herod's of our time and allow the bright star of Bethlehem to guide our path.

Dear Friends,

On this joyous evening, I would first like to offer my filial love and gratitude to H.H. Catholicos Aram I who, in keeping with tradition, has once again conveyed His blessings and Pontifical message.

In our daily lives, we have countless opportunities to give thanks to God. Today, I would like to offer a special prayer of thanks and gratitude as our dreams have finally come true and we find ourselves at a historic and memorable junction. It gives me great spiritual joy to announce that the renovation of the new Prelacy building is complete and we will be returning to our offices shortly. What started as a vision has become a reality thanks to the financial and moral support of our friends, and especially the Carolan, Bedrosian, Pilavjian, Karaghossian, Kasimian, Sulahian, and Der Ghazarian families and Forest Lawn, as well as the Building Committee Chair and

members, all of whose dedication to this project is greatly appreciated and will not be forgotten.

Just as the New Year represents a new beginning for us all, so too does our return to the new Prelacy building. As our fields of activity expand, so do our parish communities. Our newest parish, the Las Vegas parish, was rejuvenated last March and continues to thrive. In the past two years, the parish communities of Colorado, Riverside County, and the Crescenta Valley have also joined our family. The latter will soon be endowed with a Board of Trustees and delegates. We hope that the Riverside County and Las Vegas parishes will soon follow course.

As in past decades, our noble endeavors will continue in the coming years with renewed vigor, especially considering that we are nearing the 35<sup>th</sup> anniversary of our Prelacy, which we will celebrate in 2008. To alleviate our expanding activities, in recent years we have established special funds. I would like to take this opportunity to once again express my thanks and appreciation to our donors who assisted in establishing one of these funds, the Mortgage Burning Fund.

Alongside the Mortgage Burning Fund, the Prelacy has various other funds allocated for scholarships, religious publications and similar purposes. It is with the help of these funds that we are able to cover the expenses of our newsletter the "Spiritual Spectrum", our website, weekly T.V. program, and related activities through which we are able to keep our faithful informed of our endeavors. However, as our work is continually expanding, it is necessary to establish further funds, specifically endowment funds to assist in our broadening mission.

This evening, I would like to make a special mention of our activities directed towards our youth, since the youth are the future of our church and nation. The Prelacy Christian Education Department is largely responsible for overseeing this field, the work of which is carried out commendably by Co-Directors Hayr Muron and Hayr Barthev, as well as by our pastors.

As I mentioned earlier, our work and mission is constantly expanding. In this regard, I am pleased to announce that upon the recommendation of the National Representatives Assembly and in accordance with the Religious and Executive Councils, we are establishing a program for the preparation of new priests to accommodate the needs of our community. A committee has already been appointed for this purpose and plans are underway.

With this resolve and determination, we welcome the New Year and on the Nativity and Epiphany of our Lord, and renew our vows to serve our church and nation. Our clergy, council members, educators, and donors and friends must all join us in this vow. We must embark on our future endeavors inspired by the enduring message of the Nativity and guided by the bright star of Bethlehem, which continues to illuminate our lives. Like the humble circumstances of Christ's Birth, we must remain humble, just, and righteous, and fulfill our God-pleasing service with love and goodwill in our hearts, never losing sight of our objective.

I pray to God to grant us health and prosperity, a renewed spirit of service, and love in the New Year. May the Lord grace us with His bountiful blessings and grant peace and harmony to this nation. Let us once again join in the angels' tidings and proclaim

Glory to God in the Highest,  
And on earth Peace,  
Goodwill toward man...